



Տարեկան գինն է 150 դր. և 1/2
վեցամսեայ 80
Մէկ ծանուցումը տալին 5 դրուով է
Ստորագրութիւնները կանխիկ են:
Ստորագրութիւնները ամսեայ 1 դր.
են, 1/2 դր. կը սկսին:

Դուրս երթալից լրացիր՝ Երանու
ծախքը քանակը վրայ է:
Լրացրոյ վերաբերեալ ճանկի կամ որ
են ինչ գրաւ ծախքին նկատ
ուղղութիւն. եւ ասոնց ճանկն ծախ
քը խրկալից վրայ է:

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 5 ՄԱՅԻՍ

ՊՐԻՆՏԵՐՆ ԶԵՆՈՒԴԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐԸ

Մարտիկա՝ 40 մայիս.

Յորենը կիշնայ Բուժիչի վ. առնա 124, 30, 26,

— Մետաքս եւ խողակ թուր — Սուսամ 64, 50,

— Փոխանակութիւն 23, 40, — Ֆոնտո 70 50,

— Բոնսոլիտէ 92 1/4.

Լոնտոն 12 մայիս

Օսմանեան փոխառութիւն. — Առաջինը

80 3/4. — Երկրորդը 70 3/4. — Միւրէս 77 3/4.

— Նորը 2 1/2 դրուով. — Բոնսոլիտէ 95 1/2.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Պաղկեայէն ու Խաղկայէն եկած
բոլոր լուրերը Հռոմի խնդրոյն քիչ օրէն
լուծուած նշմարել կուտան.

Ալեքսանդր Խանութեան թաղաւորին
Վարօլի ժողովուրդներէն գտած համակ
րական եւ սիրալիր ընդունելութիւնը, Հռ
ոմի դաղդիական զօրաց հրամանատար
Այոյն զօրապետին Փարիզ կոչուիլը, եւ
Վարօլի իշխանին Վարօլի երթալը
Հռոմի աշխարհական իշխանութեան կողմ
նակիցներուն բոլոր յոյսերը փնջացուցին.

Այոյն զօրապետը լատ. մայիս եօթնին
Փարիզ կ'ապաստուէր. Յիշեալ զօրապե
տին Փարիզ հասնելէն անմիջապէս ետքը
Լափալէթ մարքիսը Հռոմ պիտի երթայ,
կրտսէի, նոր առաջարկութիւններ Պա
պին տանելու եւ դաղդիական զօրաց Հռո
մէն մտնելու վրայ ըլլալը խնդրելով թէ
որ Հռոմի արքունիքը տակաւին ակնաջ
չկախէ Պաղկեայ խրատներուն ու բարե
կամական յորդորմանցը.

Միւս կողմէն լուր կը տրուի թէ
Պապը իրեն եւ եղած ըլլալիք առաջարկու
թեանց մէկն ալ չընդունելով՝ Հռոմէն
մեկնելու կը պատրաստուի. Պաղկեային
Բաթիկ լրագիրը կրտսէ թէ Վարօլի Սրբ
բազմութիւնն այս օրերս Բարթո Կա
թիո. եղած ժամանակը « Լաւրատ յրու
թիւն » անուն իր սեփական շոգեշարժ
քորկէթովը ծովուն վրայ պարտելու եւ
լեւով մէջի պաշտօնակարներուն ըսեր է
թէ իր տէրութեան երկիրներէն անգամ
մ'ալ մեկնիլ պէտք ըլլայ նե այն քորկէ
թով պիտի մեկնի. Եւս լուրին վրայ
Բաթիկի սա ալ կաւելցնէ թէ յիշեալ
քորկէթն ուղղուած ժամանակը ծամրայ
եղելու համար ամեն պէտք եղած պատ
րաստութիւնը ըրած է.

Վարօլիէն եկած վերջին լուրերը կը
ծանուցանեն թէ բոլոր դաւառներէն պատ
գամաւորութիւններ կը համայն մայրաքա
ղաքը, եւ ժողովրդաց Եւրոպ. հաւատար
մութիւնը կը յայտնեն Ալեքսանդր Խան
ութեան թաղաւորին.

Ալեքսանդր Խանութեան թաղաւորին
ալ քիչ ջերմ չէ.

Մայիս 3ին (լատ.) թաղաւորը Վա
րօլի առջեւ սպասող դաղդիական նաւա
տորութիւնն այցելութեան գնաց. Վարօլ
Ալեքսանդր Խանութեան ինքնաշարժ
մը Վարօլէն կայսեր զրնց, որուն մէջ
շնորհակալ կըլլայ կայսեր իր անձին ցու

ցրցած բարեկամութենէն եւ Խաղկայի
կատարման յայտնած համակրութենէն.

« Վարօլային դաւառներուն մէջ տիրող
բարեկարգութիւնը, կրտսէ թաղաւորն այն
նամակին մէջ, ամեն տեղ ստացած սիրոյ
եւ հնազանդութեան ապացոյցներն » յաղ
թական կերպով կը պատասխանեն մեր
թշուաւաց զօրապետութիւններուն, եւ
պիտի համոզեն զՎարօլայ որ միութեան
դաղդիալը ամեն հիմնայ վրայ հաստատ
ուած եւ ամեն իտալացւոյ սրտին մէջ խոր
գրոշմուած է. »

Խաղկայ խորհրդարանին Վարօլի
գնառող անդամները Վարօլի ժողովրդ
եան կողմէն թաղաւորին գաղաւթը ող
ջունելու ներկայանալով, Ա. Ալեքսան
դր Խանութեան հաւատեց անոնց թէ այս
օրերս Հռոմի խնդիրը շատ յառաջ դա
ցած ու պարզուած է. « Մենք անշուշտ
Հռոմ պիտի երթանք, բաւ, վասն զի
առանց անոր Խաղկայի միութիւնը կա
տարեալ չիմար ըլլալ. Եւսիս որչափ
կենսական խնդիր մ'է նե մեզ համար,
նոյնչափ ալ կարեւոր է Պաղկեայ համար.
ուստի քիչ ժամանակէն Պաղկեայ մեր
մայրաքաղաքը մեզի պիտի յանձնէ. եւ այս
ալ առանց վեղձման կամ կռուոյ. Իսկ
Ալեքսանդր Խանութեան առ այժմ սա կրնամ
ըսել թէ անոր ազատութիւնը գեռ այն
չափ մօտ չէ, եւ կերեւի որ առանց արեան
կաթիլներու չպիտի կրնանք գնել լոյս. »

Թաղաւորը զիտաւորութիւնն ունէր
Վարօլի դաւառներն ալ պորտներու,
բայց խնայելով որ Վարօլէն իշխանը
Փարիզէն Վարօլի կուգայ, պարտաւորե
ցաւ հոն մնալու. Խաղկեային լրագիրները
միաձայն կրտսէ թէ Վարօլէն իշխանը
Խաղկեայի սողմին համար բարեկամ
լուր մը կը բերէ Պաղկեայէն.

Յիշեալ լրագիրներն ուրիշ լուր մ'ալ
կուտան որ մեծ զայրոյթ պատճառներ է
Վարօլի մէջ.

Պուրպուռեանց նախկին բանակին պաշ
տօնակարներէն մեկը բռնուեր է կասկա
ծելի թղթերով, եւ ստուգուեր է որ յիշ
եալ պաշտօնակարը Ալեքսանդր Խանութե
ան թաղաւորին կենացը գէմ նիւթուած
դաւաղրութեան մը գլուխ է եղեր.

Մէսինայէն լուր կուտան թէ Լիւիզ
տոսի փոխարքայ Բարձր. Մայիս փաշան
լատ. մայիս 2ին հոն հասեր՝ մեծ պատ
ւով ընդունուեր է.

Օրօքերն ու արգային պահապան
ղնուորները բարեկի կանգնէր են բոլոր
անցած ծամրայներուն երկու կողմը, եւ
նաւահանգիստը եղած պատերազմական
նաւերը թնդանութեամբ զինքը սրճու
ներ են. Քաղաքապետը եւ ժողովի ան
դամները եղկապական շոգեշարժ երթա
լով փաշան ընդունէր են, որ ցամաքը եւ
լեւով արքունի պարտը դացեր է.

Իրիկուան գէմ Բարձր. փոխարքան
Վարօլի գացեր է.

Վարօլէն ալ լուր կուտան թէ
Բարձր. փաշան արժանաւոր պատուով
ընդունուեր է Ա. Ալեքսանդր Խանութե
ան թաղաւորէն. Մայիս 4ին թաղաւ
րը կոչուեց մը ըրեր է ի պատիւ Եւրոպ
տոսի փոխարքային, բայց փաշան անձնա

կան տկարութիւն ունենալով չէ կրցեր
ներկայ գտնուիլ.

Հոյանտայի թաղաւորը լատ. մայիս
4ին փարիզ գնաց. Հոյանտայի թաղաւ
հին որ արդէն քանի մը օր առաջ Փարիզ
հասած էր, Վարօլէն կայսեր եւ կայս
րուհոյն հետ Քամիէն գնաց թաղա
ւորը դիմաւորելու.

Խոնարայէն եկած հեռագրական լուր
մը կը ծանուցանէ թէ Հիւսիսային Վե
րիկայից Հարաւայտոյ Նիւ Օրլէանս
քաղաքն առեր են. Թէ որ այս լուրը ըս
տոյր է՝ Հարաւայտոյ գործը կրնայ ընդ
ցած կրնայ համարուիլ.

Մեկնելոյն եկած վերջին լուրերը
կը ծանուցանեն թէ գաղղիացիք ու ըս
պանիացիք վերջապէս Մեկնելոյ մայրա
քաղաքին վրայ քալելու որոշում ըրեր են.

Հոյանտայի կառավարութիւնը Վե
րիկայի մէջ ունեցած իր դաղթական եր
կիրներէն գերութիւնը ջնջելու որոշում
ըրաւ. 1863 յուլիս 1ին բոլոր գերիներն
ազատ պիտի ըլլան հեռակալ պայմաննե
րով. 1. կառավարութիւնը ամեն մեկ գե
րին համար 300 ֆորլին պիտի վճարէ ա
նոնց տէրերուն. 2. Վառտեալ գերիներ
ըն երեք տարի մշակութիւն պիտի ընեն
բամբակի, շաքարի, ծխախոտի եւ այլն ար
տերուն մէջ, եւ իրենց այս աշխատու
թեանցը համար վարձք մը պիտի ընդու
նին, որուն կէսը կառավարութիւնը պիտի
առնու.

Յայտնի է որ հիւսիսային Վերիկայի
նահանգներուն մէջ ալ գերութիւնը ջնջ
ելու խնդիրը լուծուած է. Եւսիկով
Վերիկայի մէջ՝ բաց ի Սպանիայի ու
Պրէզիդիալ տէրութիւններէն ուրիշ քա
ղաքակրթեալ ազգ մը չմնար սեւամորթնե
րու գերութիւնը պահպանող.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թղթադրամոյ բարձմանը համար կայ
սերական կառավարութեան ընելիք տնո
րէնութիւններուն վրայ քանի մը օրէի վեր
այլ եւ այլ խօսքեր կը պիտուին, որոց ինչ
աստիճան ճշդութիւն ունենալը յայտնի
չէ մեզի.

Արտուի թէ Թղթադրամոյ փոխարէն
ուղղին Օսմանեան լեւա պիտի արուի 160
դուլուէն, չուղղին ալ հարիւրին 40 մե
տաղկայ դրամ եւ հարիւրին 60 բոնուրի
տրուելով՝ Թղթադրամներն այս կերպով
պիտի վերցուին.

Պայտերական կառավարութիւնը որո
շեց որ անդիւններն Եւրոպայ ապարտու
երկու պատերազմական մեծ նաւերուն
տեղ զբաւաւոր Ֆրեդաթոն մը շինուի.
Արիւշ չորս զբաւաւոր Ֆրեդաթոններ ալ
Ա. Պապը նաւարանը պիտի շինուին. Ե
սոր համար հրաման գնաց Խոնարայ
նաւը երրորդ կարգի ծովապետ Մուս
թաֆա փաշային որ այս նոր տեսակ նա
ւերուն ձեւակերպը Ա. Պապը ըրէ.

Մայրաքաղաքի Ժուռնալ լատ.
գիրը մաքսի նոր թարիֆային դրժարու
թեանէն ի վեր Ա. Պապը մաքսատանց ե
կամուտներուն ստացած յառաջարկն
թիւնը հակաընդունել համար հետեւեալ
համեմատական հոշուր կը հրատարակէ.

Փայտի եւ քանիւնաց մաքսերը դուրս
հանելով Ա. Պապը միւս մաքսատանց
զուտ եկամուտը այս մարտ ամսոյն մէջ
10179 քապի հասած է.

Նոյեալ տարի՝ հին թարիֆայով
նոյն ամսոյն մէջ 3803 քապի եկամուտ դու
րսէր էր. Բնէլ է որ այս տարի մեկ
ամսոյ մէջ 6375 քապի աւելի շահ եղեր
է, որ քիչ տարբերութիւն չէ.

Դանուրի եւ Ա. Պապը արմոնաց
մաքսատանց ալ զուտ եկամուտը 1861
մարտ 1էն մինչեւ ներկայ 1862 մարտի
1ը, 44767 քապի հասեր է, որն որ
առջի տարին 26750 քապի վարձու տրու
ուեր էր. Եւս ալ տարբերութիւնը
18017 քապի կրնէ.

Եւս համեմատական հաշիւներէն կը
տեսնուի որ տէրութեան մաքսատուները
նոր թարիֆայով առաջինէն կրկնապատկ
եւ աւելի եկամուտ պիտի բերեն տէրու
թեան գանձուն.

Պայտերական հրամանաւ
Բ. Դրան Պէլլիքի Ս. սեմ. Մէհ.
մեա Ղէմիլ պէյը Փարիզի Օսմանեան
դեսպան անուանեցաւ Միւշկուրութեան
ատիճանաւ.

Բարձրապետի Մեծ եպարքոսի տա
խորդ խորհրդական Ս. սեմ. Եֆիմ պէ.
յը Պէլլիքի անուանեցաւ.

Բարձր. Մեծ եպարքոսի որդի եւ
Խոնարայի արուեստահանգիստի կայսերա
կան տեսուչ Ս. սեմ. Եպիմ պէյը Եւ
զարութեան բարձրագոյն ատենին անդամ
անուանեցաւ Իւլայի ատիճանաւ.

Դարձեալ կայսերական հրամանագրով
Փափաքեան մեծապատիւ Պէրդ ա.
ղան տէրութեան հպատակ սերանաւորաց
զլուխ (Մարաֆար Բեհհեւար) անուա
նեցաւ փոխանակ հրաժարեալ մեծապա
տիւ Միւշկան ամիրային.

Պայտերական կառավարութիւնը ձիւ
րուն եւ կառք քաշող ու բեռ կրող կենդա
նիներուն վրայ տու ըրմը սահմանելով՝ հե
տեւեալ կանոնադիր կը հրատարակէ.

301. 1.
Մայրաքաղաքի եւ շրջակայից զոնա
զան թաղերուն ու գեղերուն Խանութեան
ու Մուխթարները, ինչպէս նաեւ վեցերորդ
շրջանակի (Պէյոզլու ու Վալաթիլի)
Միւշկուրայի իրենց շրջանակին մէջ
գտնուած բոլոր ձիերը, կառք, քաշող եւ
բեռ կրող կենդանիները եւ բոլոր էշերը
պիտի արձանագրեն բաց ի մասնակաւն
եւ մասնակ ձիերէն որ, ամեն համար կը
դորձաճուին, հեծեալաւորաց, թնդանութ
ներու եւ զետարտատանց ձիերէն. նմա
նապէս տէրութեան բանակին զօրապետաց
եւ պաշտօնակալաց իրենց յատուկ եղած
ձիերէն.

301. 2.
Եւսական տուրը մը պիտի առնուի
կառքի ձիերուն ամեն մեկէն 30 դուլու.

հեծնեւ ձիերէն 10 դուրուշ. բեռ քաշող կամ կող ձիերէն, առ հասարակ աւան ջորիներէն, սայլ քաշող եղներէն, գովէշներէն 5 դուրուշ. եւ ամեն էշերէն 3 դուրուշ:

307. 3.

Ամեն ամսոյ սկիզբը թաղերուն իմամները տուններուն մէջ գտնուած վերոյիշեալ կենդանեաց տուրքերը պիտի հաւաքեն, եւ հարիւրին 2 1/2 իրենց հաշուին վար դնելով մնացեալը էհր-Խանէթին կամ Խհթիսապին պիտի յանձնեն: Կանանկէս ամեն ամսոյ մինչեւ 15 րան պատճառ տուամար մը պիտի տան էհր-Խանէթին: Այն տուամարին մէջ նշանակուած պիտի ըլլան հաւաքուած տուրքերուն գումարը, չվճարուածները եւ աւանդ տէրերուն անուանները, թաղին մէջ գտնուած կամ վաճառուած եւ կամ մէկ թաղէն միւսը փոխադրուած կենդանիներուն թիւն ու տեսակը, եւ թաղին մուտք թարներուն կնիքը պիտի տան այն տուամարը: Բարխտունից թաղերուն մէջ այս պաշտօնը Սուլթաններուն ու Բեհհեաններուն պիտի յանձնուի, եւ հաւաքուած արոց հարիւրին 2 1/2 անոնց պիտի ըլլայ:

307. 4.

Իսկ վեցերորդ շրջանակին մէջ եղած տուններուն կենդանեաց տուրքը Սինի սիբալիթէն պիտի հաւաքեն եւ հարիւրին 2 1/2 իրեն պիտի ըլլայ:

307. 5.

Փողոցի կառքեր քաշող եւ վարձու ձիերուն ինչպէս նաեւ ուրիշ ամեն արհեստներու մէջ գործածուածներուն տուրքը էհր-Խանէթին պիտի հաւաքեն իւրաքանչիւր արհեստաւորաց գլուխներուն ձեռքը:

307. 6.

Էհր-Խանէթին երսուն աւուր պարսկաժամ մը միայն տարով եւ մնացած տուրքերուն, ամեն ամիս տուամար մը պիտի տայ տէրութեան երումաից պաշտօնատանը: Այն տուամարին մէջ մի առ մի նշանակուած պիտի ըլլան անվճար մնացած արոց գումարը եւ պարտք ունեցողներուն անուանները: Ելումաից պաշտօնատունը անվճար պիտի հաւաքեն այն անվճար մնացած տուրքերը:

307. 7.

Թաղերուն իմամները, Սուլթաններն ու Բեհհեանները որ այս տուրքերէն ստակ անցունեն իրենց վրայ, պատժական օրինադրելն համեմատ պիտի պատժուին:

307. 8.

Ար դրուած ստակներուն պատասխանատու պիտի ըլլան իմամները, Սուլթաններն ու Բեհհեանները, եւ թէ որ այն վար դրուած միջոցին վճարուելիք տուրքերը յիշեալ կենդանեաց տէրերուն վրայ մնացած ըլլալը ճանչցուի, կրկին պիտի առնուի:

307. 9.

Այլ որ վճարել չուզէ այս տուրքը, անոր ամասնակին կամ տէհիմին կամ Սուլթանի պիտի սեպուի թէ որ ունի իսկ թէ որ չունի, այն ժամանակը անոնց ուրիշ եկամուտները գրաւուելով անկէ վար պիտի դրուի, կամ ուրիշ միջոցներով պիտի առնուի:

Կ. Պոլիս 25 Յուլիս 1278.

ԱԶԳԱՅԻՆ

Արժանաւորութիւնը՝ երբոր ներքին եւ արտա համըմամբ ըլլայ՝ մէկը իրաւունք չունի զայն արգելելու, եւ ոչ իսկ մեղադրելու: Բայց երբոր աշխարհական, նկատման, շահ, կիրք եւ մղութիւն են աւանոր շարժառիթը՝ վատ եւ դատաւարտելի բան է: Երանի կրօնաւորներուն համար՝ հաւատքը մղութեան գործիք է՝ եւ ոչ սրտի ու հոգեւոր տուրք գրաւուած մը: Հետեւաբար՝ ասանկ կրօնաւոր մը բուն անկրօն է մարդը: Բերութիւն չունի: Ընկիւնը կրօնաւոր մը չկրնար այսպիսի կրօնաւորութեան մը իր

խղճովը հաւանութիւն տալ, եւ ոչ ալ այս կերպով իր կրօնին յարիւ ուղղութեամբ մը ընդունիլ, ուր կը մնայ քաշալերէ: Իսկ ի՞նչ անուն տալու է այն եկեղեցականաց՝ որոնք եկամուտ ընելու կամ իրենց կրօնին մարդ վատարկելու բաղձանքով՝ այս կերպ դարձերը ոչ միայն կը քաշալերէն ու կերպ կերպ ապօրինաւոր հրապուրանքներով կը թերադրեն, այլ եւ Լատուծոյ մատը կամ շնորհքը կը տեսնեն ասոնց մէջ:

Ժամանակէ մը ի վեր, ցաւօք՝ սրտի կը տեսնենք, մեր գաւառաւորակ աղջկանց՝ մէջ կրօնաւորութիւնը կը յաճախէ: Պատճառը կամ շարժառիթը միշտ անձնական շահ կամ կիրք է՝ օտար թերադրութիւններէ քաշալերուած: Տեղ մը աւանջորդի վրայ վէճ կը բացուի. ուրիշ տեղ միւս չորգաճիլի հետ կը խկամ հակառակութիւն կը կը, տեղ տեղ ալ տուրքերու բաժանման պատճառաւ վէճ կը ծագի, եւ ո՛ր կողմը չկրնայ խօսքը քաղցրել, կրօնաւորութեան կը դիմէ, իրաւունք ունեցողն ալ՝ չունեցողն ալ՝ զրկողն ալ՝ զրկեալն ալ:

Տուրքերու պատճառաւ ծագած վէճերուն մէջ՝ կրօնաւորութիւնը տուրքի թիւթեւութիւնը գտնելու միջոց մը համարուած է, եւ օտար թերադրութիւններուն ալ Լատուծոյ մատ կամ շնորհ կը ծագէ այս հրապուրել խաղին, որ դժբաղդաւ բար հրաշալի աղբեցութիւն մը ընելով մեր գաւառաւորակ աղջկանց մարքին վրայ, իրենց հայրենի կրօնը ու եկեղեցին ուրախներէ կուտայ:

Այս ողբալի եւ միանգամայն աններելի անկարգութեան վերջ տալ հարկ ըլլալով, աղջկանն առ ժամանակեայ վարձութիւնը գործն իր ամեն պարագաներով կարեւորական բարեխնամ հաւաքութեան ներկայացուց, եւ արդարաւոր տէրութիւնն ալ հեռուեալ իմաստուն անօրէնութիւններէ ըրաւ ու բարձրագոյն հրամանադրով Ասոյ հայրենակ գաւառաց կուսակալներուն հաղորդեց:

Թարգմանութիւն հրամանագրին զոր զրկեց Բարձրագոյն (Կոնստանդնուպոլիս), Գովարի, Տրապիզոնի, Կարսի, Քիւրտիստանի, Պրուսայի, Իգդիրի, Պիզայի, Խարբըրու, Ատանայի, Մարաշի, Գաղատայի, Գասթամուրի, Սեբաստիոյ, Ամասիոյ եւ Էփեսոսի:

Լատուծուի գաւառներն ու նահանգները բնակող Հայոց թէ՛ սովորական եւ թէ՛ զինուորական տուրքերուն քաղաքացի ու զիւղորէից բաժինները որոշուելէն ետեւ Եզգայնոց մէջ բաժնուած ատենը իրենց մէջէն անկար եւ խեղճ եղող անձանց համար որոշեալ բաժինը հարուստ եւ կարող գանձողներուն յօժարութեամբ աւանդ բաժնին վերադիր ընելով իրենց տեղին համար որոշուած բուն իսկ գումարը լեցնելէ ետեւ տեղին ի տեղին կը ժողովին: Այս հաշիւով ամեն մէկ տեղին որոշեալ բաժիններուն երրորդ մասը բացը կը մնար եւ այս բացը մնացած մէկ մասը Եզգայնոց մէջ կոտորում անուելով միւս երկու մասը վճարող անձանց բաժնին վերադիր կըլլար: Այս միջոցիս Պաթոնի վարդապետները Հայոց թէ՛ սովորական եւ թէ՛ զինուորական տուրքերը կը թէթեղնեմը ընելով եւ կերպով մը համոզումներ ու գրգռներ ընելով իրենց կրօնը ընդունողներուն անունները Հայոց արձանագրութիւնէն հանելու ու զատելու մտքը Բ. Գաւառի հրամանագրերով ալ կառնէին, որով թէ՛ սովորական եւ թէ՛ զինուորական տուրքերէն յօռաջ գոյն ամեն մէկ տեղին համար բաժին ինչպէս բուն իսկ գումարէն Պաթոնի եղողներուն բաժինները ըստ մարդաթիւի կը գտնէին, եւ ասանկով անոնց վրանին առած սովորաց բաժինները որ վճարելու խոստացած էին, Հայոց վրայ ձգել կուտային: Այս բանը հաստատուած կանոնին դէմ ըլլալէն ի զատ Հայոց համար վնասակար ու վերջապէս Տէրութեան արդիւնքն ալ ոչնչանալու պատճառ էր: Ուստի Հայոց Պատրիարքարանը խնդիր ը

րաւ որ ասոր վրայօք պէտք եղածը անօրէնութիւն եւ Պաթոնի վարդապետներուն կողմէն Հայոց եղած սա՛ գաթիակորութիւնները վերցուն: Պաթոնիները թէ՛ պէտք քանի մը տեղին համար իրենց արձանագրութիւնը (նոտիֆիկացիոն) եւ տուրքը պատկու մտքը խնդիր մատուցած ու հրամանագրեր ալ առած էին, բայց աւանդ տուրքը ըստ մարդաթիւի զատելու հրաման եղած չէ, այլ ըստ կանոնի զատվելը գրուած է հրամանագրաց մէջ: Այս եղելութեան անօրէնութիւնը Երբունի Գանձատանը կառավարչին յանձնուելով՝ անկէ ալ գանձատանը ժողովոյն տըրուեցաւ, որ ծանուցադիր (մազաթիւ) մը շինեց այսպէս: Օսմանեան քաղաքներուն մէջ զինուորական տուրքերը՝ ամեն մէկ զիւղին Մահմետական չեղող բնակչաց սովորական արոցը համեմատութեամբ եւ ամեն մարդուն ներկայ կարողութեանը ու տարեկան առուծախին արդեանքը նկատմամբ Տէրութեան գործակալներուն ու Եզգային երեւոյցաց միջոցաւ կարգի դրուած են, որ անոնց սովորական արոցը վերադիր ըլլալով կը ժողովին: սովորական տուրքն ալ բոլոր քաղաքացի ու զիւղորէից բնակչաց գլխու թիւով եւ միաբանութեամբ արդարութեամբ որոշուած ու ամեն մէկ անհատին նմանապէս ներկայ վատակին ու շահուն նկատմամբ բաժնուած են, ինչպէս որ կանոնը կը պահանջէ: Ուստի թէ՛ սովորական եւ թէ՛ զինուորական յատկացեալ տուրքերը ամեն մէկուններէ կայ կարողութեանը եւ տարեկան շահուցը նկատմամբ հաստատուած են, եւ այս տուրքերը ըստ մարդաթիւի բաժնիք ընել իսկ կանոնին հակառակ է: Թէպէտ Հայերն ալ եւ յառաջ այս տուրքերը ըստ մարդաթիւի բաժնիք են, եւ ապա՝ մէջերնուն խեղճ ու անկար եղողներուն բաժինները հարուստ ու կարողութիւն ունեցող անձանց բաժնին վերադիր ընելով հաւաքելու ելել են: Ուստի անոնց այս առաջին բաժնուումը՝ ինչպէս որ կը հասկըցուի, իրենց մէջը ընդհանրապէս չափ մը որոշելու համար է: Եւ աղքատաց ինչպէս բաժնիքները դարձեալ կարողութիւն ունեցողներուն վերադիր ընելով կարգի դնելուն ու այնպէս հաւաքելուն համար՝ կանոնին նպատակը տեղը հասան ու արդարութիւնը ի գործ դրուած ըսել կըլլայ: որով ամեն մէկ անհատին շիշք բաժնիք աղքատաց բաժնին ալ հետ առնելով բնականաբար որոշուած կը համարուի: Հայերուն մէջէն Հոմեադաւան ըլլալ ուղղութեան համար արձանագրութիւնը զատելու առիթով անոնց բուն իսկ աղջկան բաժնին վերադիր եղած աղքատաց բաժնիքը՝ Հայոց վրայ ձգելու կամ զինուորական վրայօք իրաւունք մը չենք կրնար տեսնուի: վասն այսորիկ արոց բաժնուումը ըստ մարդաթիւի անօրէնութեան չէ: այլ պէտք է որ ըստ խնդրոյ Պատրիարքարանին Հայոց՝ Լատուծուի բոլոր Պրուսիական ընդհանուր պատուէր զրկուի թէ՛ Հայերուն մէջէն կամ Հոմեադաւան եղողներուն եւ կամ ուրիշ կրօնից հետեւողներուն՝ ինչպէս որ վերը ըստինք՝ թէ՛ զինուորական եւ թէ՛ սովորական տուրքերէն Հայութեան ժամանակին տարուէ տարի քանի դուրուշ կը վճարէին նէ, դարձեալ նոյնը վճարելու համար հետեւած Եզգային հաշիւը անցին ամբողջ եւ այս մասին բնաւ անիրաւութիւն մը չըլլայ: նաեւ Հոմեադաւան վարդապետաց արած գաթիակորութիւններն արգելելու մասին եղած խնդրոյն վրայօք ալ հարկ եղած անօրէնութիւն: Գանձատան ժողովոյն այս ծանուցադրին համեմատ՝ գանձատան կառավարչը իմաց տուաւ Բ. Գաւառի ուսկից ալ՝ պէտք եղած Պրուսիականներուն եւ Պառավարչներուն ընդհանրապէս պատուէրները զրկելով երեւութիւնը՝ Գանձատան կառավարչին ալ ծանուցուեցաւ: Ուստի ձեր կառավարութեան տակը եղած տեղուանքը եթէ Պաթոնիները անանկ ըստ մարդաթիւի սովորական եւ զինուորական տուրքերը գտնելու վրայօք խնդիր ըրել են նէ, դուք ալ՝ վերոյիշեալ գանձատան ժողովոյն դրած ծանուցադրին իմաստին հա

մանայն վարուելք իսկ կրօնաւորութեան գործը չափահաս անձանց յօժարամտութիւնէն կախեալ ըլլալով, այս մասին ամենեւին համոզումներ ու գրգռներ ընելու ոչ հարկաւորութիւն կայ եւ ոչ արժանի կը տեսնուի: նորին աղագաւ այս կէտին ալ Հոմեադաւան վարդապետաց իրենց երեւոյցաց միջոցաւ հասկըցնելու հոգ տանիք: 1278 Էփր 15

Գաղղիական Իւնիոն անուն կրօնական լրագիրը Կ. Պոլսոյ Լատին Հայ եւ Պուլար կաթոլիկաց առաջնորդ գերաւարդառ Պրուսիոյ, Հատուեան եւ Սէլէթիոս արքեպիսկոպոսներուն մէկ յայտարարութիւնը կը հրատարակէ Եւրոպայի կաթոլիկներուն ուղղութեամբ: Յիշեալ յայտարարութիւնը Հոմեադաւան կրօնին Երեւելի մէջ այս օրերս ըրած յառաջադիմութիւնը ծանուցանելով, աւելել մեծ արդիւնքներ ձեռք բերելու համար Եւրոպայի ջերմեամբ կաթոլիկաց առաջնորդներն օժանդակութիւնը կը խնդրեն:

Յիշեալ յայտարարութեան մէկ մասը մեր աղջին վերաբերեալ ըլլալով՝ արժանի կը համարենք մեր արդոյ ընթերցողաց եւ մանաւանդ գաւառաց Գեր. առաջնորդներուն ուշադրութեանը յանձնել:

«Այս յաճող շարժումը, կըսէ յիշեալ յայտարարութիւնը, նախ հայոց մէջ սկսաւ եւ օր ըստ օրէ մեծցաւ: Եւրոպայի քաղաքներ՝ որոց մէջ երկու կամ երեք տարի առաջ հաղւեք քանի մը կաթոլիկ ընտանիք կային, այսօրուան օրս հազար եւ աւելի ընտանիք կը համրեն: Խարբըր, Երապիլ, Թէքիրտալ, Մարաշ, Անտարիս եւ այլն եւ այլն, նոր օրինակներ են: Այս շարժումն աւելի շուտ առաջ կը թարթէ թէ որ մեր փափարին համեմատ հոգալու եւ փութացնելու համար պէտք եղած դրամական միջոցներն ունենայինք...»

«Արդ, ի՞նչ կը պահի մեզնի այս արդիւնքը կատարեալ ընելու համար՝ Պուրձըն արդէն իրովն կը յուշեն, որ ինչ երկինքէն շնորհ կը պահի, եւ ոչ հաւատացելոց Հօրը կողմէն քաջալերութիւն... ո՛հ. մէկ բան մը միայն կը պահի, այն է՝ դրամական կարողութիւն, որպէս զինոր քարոզչութիւններ սահմանեց, քահանայներ ձեռնադրենք, կղերականներ բանանք, եկեղեցիներ շինենք. եւ ահա այս կը խնդրենք ձեր բարեպաշտութիւնէն:»

Եզգային Պատրիարքարանին հետեւեալ պաշտօնական ծանուցումը եկաւ մեզ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՆՈՒՅՈՒՄ

Թէպէտ եւ արդէն իսկ իւրաքանչիւր սուրբ կարգաւոր եկեղեցոյ տէր Թաղեօսի նկատմամբ յայտարարութիւն եղաւ թէ՛ ինքը չէ երբեմն հայազգի Սարափ Միքայէլի կրկին անուանութիւնը կատարողը, բայց սակայն ումանց մէջ յիշեալ քահանային վրայ անհիմն տարածախոսութիւնները չարունակելուն՝ հարկ կը համարուի վերասին ծանուցանել ի պաշտօնէ թէ՛ Հռոմաց պատրիարքարանին առ Սրբադին Տեղապահին հասած ծանուցադրին նայելով՝ մարդկայնութիւնը եւ քննութիւնը ըլլալէն ետեւ կրկին ստուգուած եւ հաստատուած է որ յիշեալ աղբադրութեանը պատկող քահանայն յոյն քահանայ մըն է, եւ հետեւապէս տէր Թաղեօսը այս մասին բողոքովն անպարտ ճանչցուած է:

3 մայիս 1862
Ի Պատրիարքարանի Հայոց

Եհաւասիկ Սուլէյմ գրուած նամակը որ նախընթաց թուով ծանուցելը:

«Յարգող խնամքի Մատիս պատուական լրագրողը:

«Աղագուի ի Ձեր աղագուսէր յարգութիւնէն որ մեր ներկայ դիպուածքը առնուի Ձեր հայրենական էջերուն մէջը: Օսմանեաց մեծարօր Տէրութեան տեղապահները որչափ որ սահմանուած է Սուլէյմապաշին մէջը նստիլ, երբեք անոր իշխանութեան տեղը հայոց թաղի մէջը չէ եղել, ալ ի մէջ տաճկաց Եթովպիայի հա

Տեղակալ Ռ. Մահմադ փաշան* բռնա-
գառնեց որ հայոց թաղերուն մէջ նստի
հիւրըմբռնեմ, որոնց ժողովականքը ար-
ժան տեսան որ վերին թաղ Քեշեշեանց
տունը նստէ. ուստի որչափ որ դէմ դը-
րին թաղեցիք չկրցան խօսքերն յառաջ
տանիլ. ի վերջոյ ամենայնի խայրախամ
փաշան եկաւ նստաւ յիշեալ տունը. Ա. եր
եօթն ամիսէն զինի, ներկայ օրերս (մարտ
երկուսին) գողը մտաւ, արկեղատունը
գտնուած դանձր և դրամը որ քան հա-
զար դուրուշ եղուած է կողպտեր առեր
դնացեր է. խայրախամ փաշան և ժողո-
վականքն զթաղեցի ժողովուրդը կ'ընեն
բանտ կը դնեն. այն միջոցին ներկայ կը
գտնուի թաղի մէջ Ս. Արապչեանի Ա.
աջնորդը զերապատիւ Տ. Արապչեան Ար-
քաղան արքեպիսկոպոսը. կ'ընեն ի հիւ-
րըմբռնեմ յիշեալ Ա. աջնորդը, և ինչ մը
խօսեցին զինի Արքաղան առաջնորդը մուր-
հակա թէ իրար կուտայ՝ մէկ տարին մին-
ջև հարկը տարի իմ աղբիս մօտը գրու-
նուի վճարեմ այդ դրամը և ըստ Արքա-
նի կանոնի կրեմ ցաւը ըստ արժանոյն կը
մեթեն Արքաղանին խնդիրը. տանուտէր-
քը և քանի անձինք թաղէն կրկին բանտ
կը դնեն, կ'ընեն արքեպիսկոպոսը առաջ-
նորդին և թաղեցիքը կամ դրամ կամ
գող կուզենք անպատճառ. Արքաղան ա-
ռաջնորդը քառասուն օր ժամանակ կառ-
նու դրամը հանելու. Ինկեղեցւոյ մէջ մի
զինի միջոցով զինքը հսկում աղօթք
արտասուելը կուտայ ընել, երկու հրաշա-
գործ աւետարանը անդամատանը շուրջ պը-
տրոցներով (որոնց անուն Սև աւետա-
րան և խլիճ աւետարան). Տաս կամ քը-
սան օրը վաղ անցնելով բան մը չ'յայտ-
նուեցաւ. Քեշեշեանց պէտք կախարչ քիւրմ
կնիկ մի կ'գտնայ վիճակ կուտայ բանալ,
որուն վիճակը կըլէ տանուտէր Ա. Սի-
սակին վրայ. կ'ընեն զապրիաններով տուն
կերթան, երկու անուոր կ'հարկեն, բան
մը չեն գտնար զատ ի գրքերէն. կրկին
կրկին կ'ստիպեն Արքաղան առաջնորդին որ
դրամ տայ տայ թաղեցիքը. առ Աստ-
ուած կ'աղաղակեն վերստին երկու աւե-
տարանով զինքը ցորեկ. ժողովուրդը ար-
տասունքը կ'ընեն քանի բազմատարած ձեռ-
քերով. Արքաղան առաջնորդը քարոզին
մէջ ի տաղանայ արեան արտասուելը
թափէ. անդ է տեսնել զիմուսն մեծ
արանց և կանանց ծերոց և տղայոց. Քա-
նի օր ալ վրան անցնելով որ երեսուն ա-
ւուր վրայ կերթայ, յանկարծ շուկային
մէջ մը թաւաղործ Շապան անուն տաճ-
կի մը որդեգիր Խանյիլը ոսկի կը մանորէ,
պարտք կուտայ, տան պակաս բաներ կառ-
նու. Արքանու մէկէն ի մէկ հիւրըմբռ-
նեմ կ'ընեն, Ինկեղեցւոյ զապրիանները և
մեծիկները կը հաւաքուին իւր թաղի ը-
նդալ յիշեալ Խանյիլը, վերջին թաղի
ընդալ կուտայ թէ ես եմ թող տուեցեք ինչ
հայրեր. կերթան ոսկիքը տանը չօրի տակէն
կ'ընեն կ'ընեն. թող կ'արուին մերա-
յինք ի բանտէն, և յիշեալ աւաղակը
շրջապակալ բանտ կ'ընեն, և անկա-
կած եմք որ անոր վիճակը կ'տուր ըստ ար-
ժանոյն ինչպէս որ երկու հարկը տուելը
թաղաւորին գողը սեպելով պիտի պատ-
ժուէին, և հայոց աղերսներու անունը զե-
տնոր զարկուէր Տեղեւեան յառաջ.
օրհնեալ է Աստուած Հայոց, և մեծ է
Տէր Իսրայէլի, տեսնուեցաւ այդ յա-
տուկ հրաշագործութիւն այժմեան դա-
րուս.

«Մանր խնարհ Մուշ» քաղաքի
վերին թաղի ժողովուրդը. »
1862 մարտ 25

Ի Մուշ (Արտաշատի թաղի մէջ)
Այս անակնի պատմած ցաւալի անց-
քերուն մէջ՝ ըստ մեզ՝ ամենէն ցաւալի
առաջնորդին տկարութիւնն է որ ասի
առաջ ալ ուրիշ անկիւններու մէջ տես-
նուեցաւ. Արքալը կը ծանաւանք յիշեալ
Պեթ. Առաջնորդին բարեպաշտութիւնն
ու վարուց արքութիւնը, բայց սա ալ
չենք կրնար ժխտել, որ եթէ կենցաղա-
գէտ ժիւր և տէրութեան օրինակն ու կա-

նոնացը հմուտ առաջնորդ մը գտնուէր
հոն, ինքզ Մ. առաջնորդին անկողն
ծով մը ամօրեայ ժամանակ բանտի մէջ
չէին տեսնուիր. և ո՞վ զիտէ ինչ պիտի
բըտը խղճարներուն վերջը՝ թէ որ իս-
խանաւորութեան դժուրութեամբ բուն դը-
ղը երեսուն չենէր.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պէտք է զարգիցնել լազարներուն
գրուած նամակները միայն կը գտնեն
Ի իրանաւ կուտակալ Ա. սեմ. Տալուր
փաշային համաձայնը և աւաղելով կա-
ռաւարութիւնը որով հարազատ կուտակա-
լը յաջողեցէ՝ առջեւ բերանը դէմն ելած
խղճարներուն հարկերը, և անկարգու-
թեան ու աւերանայ անպարտք եղած
երկիրը հետզհետէ բարեկարգելով՝ ժողո-
վրդոց վատահոլութիւնն ու համակրու-
թիւնը գրաւեցէ.

— Պրուսացի մայրաքաղաքի Քու-
ռիէ տ'Օռիան լազարին գրուած նամակ մը
ծանր դանգաճանք կընէ Պրուսացի նա-
խար կուտակալ Թաշիր փաշային դէմ,
որ բնիկ Պրուսացի ըլլալով մեծ բարեք
կրնար ընել իր հայրենի քաղաքին, բայց
բան մը չընելէ զատ՝ ընդհանուր զեղ-
ծումն ու անկարգութիւններն աւելցնել
են երկիր իր օրովը. Օտարութիւններուն
ամակալը չտարով, անոնցմէ ուրիշ՝ որ
հին Օւլթիքներ են եղբ' աւեր քաղաք
են, ու լեռները քաշուելով իրենց հին
արհեստը (աւաղակութիւն) գործել ըս-
կըսեր են. Ըսողք փառած ժամանակին
Քիրմասթի միւսիւրին գացեր բռնու-
թեամբ 3000 դուրուշ աւեր են ու փո-
խարեն պոստ մը տուել են Թաշիր փա-
շային վրայ, որպէս զի իրենց անվճար մը-
նացած ամակալներովը վճարէ այն ստա-
կը.

Այս լուրերը տուող նամակը կը պատմէ
նաեւ թէ յիշեալ կուտակալ իր տունը
նորոգել ու պնել տարու համար դիշեր
ցորեկ մարդիկ բանեցուցեր և մինչև ցայ-
սօր ստակ մը չէ տուել այն խեղճերուն.
Ինչ հակառակ թշնամանքը կը վախէ և
զեր դանձր երբոր աղերսաւոր տարով
վարձերնին կը խնդրեն իրէն. Իր փեսան
Պէհաւտին է Գէնտին ալ նոյն ընթաց-
քը բռնած է եղբ'.

Այս պատմութիւնները թէ որ ստաց-
են նե՛ տարակոյս չմնար թէ Պրուսացի ժո-
ղովուրդը շատ դժեղ եղած պիտի ըլլայ յիշ-
եալ կառավարչին փոխուելէն.

— Պէտք է զարգիցնել լազարներուն
գրուած նամակ մը լուր կուտայ թէ ալ-
րի 5, 6 և 7ին զինքները Պարսկաստանի
ժողովուն մէջ սաստիկ փոթորիկ մը տի-
րելով 73 մեծ ու պղտիկ նաւ կորսուելը
են.

Հարկեր չափ զօրակներ ալ որ Պաճա-
կոսէն Պէտք է կերթան եղբ', Ա. ուէտ
էլ Ալիքը դաշին մէջ յանկարծ վերայի-
նալ փոթորիկէն բռնուելով, փախուելի
չափը մեռել են. Հովին բռնութիւնը,
կարկուտին խղճարները և ցարկոյն
ստակութիւնը տեսնուած բան չեն եղել
այն երկրին մէջ.

— Իրանացի ճարտար մը՝ Ս. Պո-
էր անուն այս օրերս չափաւոր նաւ մը
հարած է որ ծովուն տակը հանգիստ կը-
նայ պտուղի՝ 500 և աւելի օտնաշախ խո-
րունկէն. Այս շոգեկանը որ 20—30 մարդ
կրնայ պարսկական խոտ լաւ կը յար-
մարի, կրտսն, ներքնաձուլեան շինութիւն
ներու, մարդարիտ որաւոր, բնկովեալ
նաւեր ազատելու և պատերազմի ժամա-
նակ թշնամայ պատերազմական նաւերը
ծակելու կամ վառօդով բռնկելու.

— Մանկեմէրէն հետեւեալ կը
գրեն Իզմիրի Միւսթիւն Սահմանադրա-
կան հանդիսին.

«Մանկեմէրի Հայ բնակիչք բա-
ւական ատենէ ի վեր մեծ փախք ու-
նէին եկեղեցի մը շինելու նոյն քաղաքին
մէջ, և իրենց քիչութեան հայերով չէին
վատահոլ տանի մէկ ամենահարկաւոր ու
ազգոգուտ գործը մը ձեռքը դրնէլ. բայց
իրենց աղաքաւորական եռանդը որ ըստ օր-
է ալ ելալով, այս շարքի իրենց մէջ ժո-

ղովք մը ըլլին, և միտքն հաւանութեամբ
Հայ Առաքելական մատուռ մը շինել
որոշեցին. որուն կառուցման համար անկի-
ցապէս առ այժմ 400 լիւրայ մօտ ստորագր-
ւեցան. միանգամայն թէ քահանայի մը և
թէ եկեղեցիին ծախքերուն համար հար-
կա որ եղած ստակն ալ հոգալու՝ յօժար
կամք յանձնառու եղան. Այս Առաքելա-
նահանգ գործը թէ շինութիւնը և թէ
կատարելութիւնը մէջինքն չորս հոգի
յանձնուեցաւ քուէարկութեամբ. Աւե-
րոյ կըլլայ այս աղաքաւորական գործին
մեր Ազգին ինչ աստիճան պատիւ բնեն
և օգտաւոր ըլլալը յիշել. Աղաքաւոր
պէս շահաւետ երկիր մը և առեւտուրի
կեդրոն եղած տեղ մը Առաքելական
եկեղեցի ունենալէն յոյսերս մեծ է թէ
մեր ազգին մեծ օգուտ և պատիւ ըլլալու
է. »

— Մոսկուա հրատարակուած Համ-
բուրքեր Ռուսիոյ լազարին հետեւեալ
լուրերը կուտայ.

«Արդ իշխանի սինդի փոքրուրդ՝
պետական խորհրդական Զոլֆանէս Սի-
րաբեանց, ի փոխարէն իւր ջերմեանդ
ծառայութեան, անցեալ տարու դեկ-
տեմբերի 21ին, ամենօրեայ ծառայութեան
համար յօդատարաւ կայսերէ՝ պը-
րոյն Սթանիսլաւայ երկրորդ աստիճանի
շքանշանաւ.

«Իսթրաքային հրամանաւ ի 17 փե-
տուարի, հոգաբարձուն Փեթկուպուր-
եան ուսումնական շքանշանի Անդրա-
Լէթիման Զիլիփաճան արժանեցաւ իւր
պաշտօնից՝ իւր ինքնաձեռք, և նորա տեղ
հոգաբարձու նշանակուեցաւ նախկին հո-
հոգաբարձուն ներքին խորհրդական Հայ-
կազն Զոլֆանէս Գեյմեանցին.

«Իսթրաքային մամուլը երաւ այս օ-
րերուն վեհապետ արքանահատար Աա-
թուղիոսին մերոյ նոր դրական երկամ-
ութիւնը ընդ վերնագրովս «Աղեցող
քրիստոնէական ուղղափառ վարդապե-
տութեան».

— Մասեայ Աղաւելոյ մարտ 15
թուոյն մէջ հետեւեալ կը կարգանք.

«Բոս կայսերական օրինաց Ռուսաց
եկեղեցականներուն ու նոյն օրերուն և
այլիներուն աները ազատ են զինուորա-
ներու՝ այսինքն զինուորաց բնակութիւն
տալու կամ անոր տեղը ստակ վճարելու
պարտքէն, թէպէտ և այն աներուն մէկ
մարդ ուրիշ վարձուրի ձեռք տրուած ըլ-
նի, բաւական է որ մէկ տուն համարուին.
Իսկ մեր Հայոց եկեղեցականներուն այն
աները միայն ազատ էին զինուորներու բը-
նակութիւն կամ անոր տեղը տալ
թէ՛ որով մէջ իրենց կը բնակին. Այժմ
Ա. Աստուր բարեհաճեցաւ որ Առա-
քելական Հայոց եկեղեցականաց իրա-
ւունքն ալ այս բանին մէջ հաւասար ըլ-
նի Ռուսաց եկեղեցականներուն. »

— Պրուսիոյ Բեռլինի քաղաքի թիւ
նը բոլոր լազարաց գործակալութիւնը ձը-
ղելով, Արժուր Ա. աստուրական ամառ-
քին գործակալութիւնը Ա. անայ Ա. արա-
ղայ Ս. Իշան փառք միաբաններէն Տոս-
պեցի արժանապատիւ Տ. Ղ. Ենդ վար-
դապետ պիտի փոխէ, որ այժմ քաղաքի
է Ղ. արմիւր Ս. Առաքելական եկեղե-
ցին. Այս ամիս կը խնդրուի արդոյ և
աղաքաւոր բաժանորդներէն, որ երբ յիշ-
եալ վարդապետին կողմէն ներդրուող
բերը իրենց ներկայացուին, բաժանորդա-
գիրը շուտով վճարելու շնորհ ընեն. ըստ
որում գիրը շատ աճան՝ և այս ստակն
ալ Ա. արաղայ փառքին պարտուցը սահ-
մանաւ ըլլալով, անտարակոյս եմք որ
ամեն մարդ իր բաժանորդաւորն առաջին
անգամ խնդրուելուն չըլլաւ վճարել
ի պաշտօնութիւնն նոյն Ա. փառքին և ի
յառաջալիւթիւն Ազգին.

— Փարիզը գրատուել Խաճըպար
խանէն Չուխաճի խանին փողոցը թիւ 4
խանութիւն փոխադրուած է.

Ա. անձանեալ քրիստոնէից ինքքերը
(թէրքէ) կանոնաւոր կերպով և արդա-
րապէս բաժնեկու համար ըսին. բանի ան-

գամ Ռ. Պաշեն պաշտօնական կերպով
պատուէրներ զիմուած էին ամեն կողմ.
բայց ոմանց լաւ չհասկնալուն եւ ոմանց
ալ չարաչար մեկնելուն պատճառաւ մին-
չեւ հիմա օրինաւոր գործադրութիւն մը
չտեսնուելով, կայսերական կառավարու-
թիւնը յատուկ կանոնադրութիւն մը չե-
նեց այն կարեւոր նիւթին վրայ եւ կայսե-
րական հրամանադրով տեղութեան բոլոր
գաւառաց կուտակներուն, դատաւոր-
ներուն եւ քրիստոնէայ աղքատ պատրիարք-
ներուն զինք՝ պատուիրելով որ թէրքէի
գործերը պարտէսեալ նոյն կանոնադրու-
թեան համաձայն կարգադրեն. Ազգային
վարչութիւնն ալ նոյն կարեւոր կանոնադ-
րութիւնը հայերէն լեզուի թարգմանել
տարով՝ տաճիկերէնովն համարեմ տուաղբել
տուաւ, որպէս զի աղքատները դանի կար-
գալով՝ իրենց իրաւունքն ըստ այնմ պաշտ-
պանելու կարող ըլլան.

Յիշեալ տեղաւոր մայրաքաղաքիս ա-
մեն հայ գրաւաճառներուն քով կը գրու-
նուի.

Ազգային երգեր, Թատերական նուադ-
ներ ու պարերներ հրատարակելու, ըն-
տիր նուադածուներ յառաջ բերելու և
երաժշտութեան ծառայող առհասարակ բո-
լոր հայոց մէջ ծառայելու գովելի նպա-
տակաւ Արաճապետան ընկերութիւն մը
կազմուեցաւ աղբիւս մէջ.

Այս ընկերութիւնը մասնաւոր ինս-
տիտ մը պիտի հանէ նաեւ. Բնար Հայկա-
կան անուն հանդէսը կանոնաւոր և բա-
րեկարգ վիճակի մը մէջ պահելու, երգե-
լին ընտրանաւ հրատարակելու և տեա-
րակները ժամանակին հանելու.

Ամեն հայազգի անգամ կրնայ գրուիլ
այն ընկերութեան բաժանորդ գրուելով.
Բնար Հայկական հանդէսին որուն վե-
ցանկէն զինն է 60 դուրուշ, և ամիսն
անգամ մը պիտի հրատարակուի քառա-
ծալ մեծ գիրքով.

Արաճապետան ընկերութիւնը հիմա
զիւր ժողով մը ունի որուն անդամներն են՝
Գրիգոր Եփեսոսի Աղաթոն.
Գրիգոր Եփեսոսի Օտեան.
Գրիգոր աղա Խուրաթաճեան.
Շանիկ աղա Պէյքեճեան.
Մարտիրոս աղա Սիւհեմիսեան.
Յակոբ Եփեսոսի Քեշեշեան.
Յակոբ աղա Պուրնաւազեան.
Յարութիւն աղա Փափապեան.
Յոհաննէս աղա Ալիշեան.
Յովակիմ աղա Ալիշեան.
Դահապետ Եփեսոսի Ռուսիսեան.
Պրոքս Եփեսոսի Քեշեշեան.
Սերափէ աղա Թաղաւորեան.
Փիլիպպոս աղա Ալիշեան.

Այս յարկի անձինքը ընկերութեան
նպատակն յառաջ տանելու համար պէտք
եղած միջոցներն ի գործ դնելու և անոր
զարդացմանը հակելու պաշտօնը աղքատ-
րաբար իրենց վրայ առած են.

Գանձապետի պաշտօնը կը վարէ Ս.
Յարութիւն աղան Փափապեան, որուն
ստորագրութեամբը վաւերացնելով պիտի
ըլլան բաժանորդաւորութեան անդորրա-
գիրները.

Բնար Հայկական հանդէսին մէջ
հրատարակուելիք երգոց քննութեան ու
ընտրութեանը հակելու համար ալ յանձ-
նաժողով մը սահմանուած է, որուն ան-
դամներն են հետեւեալ ուսումնական ան-
ձինքը.

Պ. Թալոս Կապաբեան.
«Մատթէոս Մամուրեան.
«Միլիտի Պէշեքճեան.
«Յակոբ Ռսիսեան.
«Սրապ Հեքիմեան.
«Ստեփան Փափապեան.

Իսկ հանդիսին երաժշտական մասին
հեղինակ որոշուած են Պ. Տիգրան Չու-
խաճեան և Պ. Գաբրիէլ Արաբեան.

Գաւառներէն բաժանորդ գրուիլ ու
զոյնները աղքատներ լազարաւորներուն մէ-
կուն հետ կրնան թղթակցել.

